ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 132 - Ա **19 հուլիսի 2017 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 56^2-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության 2016 թվականի սեպտեմբերի 5-ի ՆՍՄ/4863-16 գրությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի պահանջները չկատարելու համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետ Աշոտ Խաչատրյանին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:
2. Նշանակված տուգանքը մուծել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 900005243119 հաշվի համարին, մուծման կտրոնը ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի հողօգտագործման և հողաշինարարության բաժին՝ 15-օրվա ժամկետում:
3. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ Ն. Ղազարյանին՝ Աշոտ Խաչատրյանի կողմից նշված ժամկետում տույժը չվճարելու դեպքում գանձումն իրականացնել դատական կարգով:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ